

# ԿԿՅ Կանաչ Ֆինանսական Համակարգեր (ԿՖՀ)

Երկիրը՝	Տարածաշրջանային
Ծրագրի համարը՝	56002
Բիզնես ոլորտը՝	Ֆինանսական հաստատություններ
Պետական/մասնավոր՝	Մասնավոր
Բնապահպանական կատեգորիա՝	ՖՀ
Հաստատման ամսաթիվ՝	12-ը փետրվարի 2025թ.
Կարգավիճակը՝	<b>Հայեցակարգը վերանայված է</b>
Ծրագրի ամփոփ փաստաթղթի անգլերեն տարբերակի հրապարակման ամսաթիվը՝	08-ը հունվարի 2025թ.

## Ծրագրի նկարագրությունը

ԿԿՅ Կանաչ Ֆինանսական համակարգեր (ԿՖՀ) շրջանակը («ԿԿՅ ԿՖՀ շրջանակ» կամ «Շրջանակ») կազմում է 620 միլիոն դոլար հատկացում, որից 434 միլիոնը կտրամադրվի Բանկի միջոցներից, իսկ 186 միլիոնը՝ Կանաչ կլիմայի հիմնադրամից (ԿԿՀ): Շրջանակը կիրականացվի Հայաստանում, Եգիպտոսում, Հորդանանում, Վրաստանում, Ղազախստանում, Ղրղզստանի Հանրապետությունում, Մոլդովայում, Մոնղոլիայում, Մարոկկոյում, Յուսիսային Մակեդոնիայում, Սերբիայում, Տաջիկստանում և Ուզբեկստանում (միասին «13 իրավասու երկրներ»):

Շրջանակը գործընկեր ֆինանսական հաստատություններին («ԳՖՀներ») կտրամադրի վարկեր, որոնք վերջիններս կուղղեն մասնավոր և պետական հատվածի շահառուներին (այդ թվում՝ ֆիզիկական անձինք, ՄՓՄՁ-ներ, տեխնոլոգիաների ոլորտի մատակարարներ, արտադրողներ, վաճառողներ և ծառայություն տրամադրողներ, շինարարական ընկերություններ, բնակարանային ասոցիացիաներ և քաղաքապետարաններ) ջերմոցային գազերի ցածր արտանետումներով և կլիմայի փոփոխությունների հանդեպ կայուն զարգացման ներդրումներին՝ գեներացիային բաղադրիչի կիրառմամբ:

## Ծրագրի նպատակները

ԿԿՀ ԿՖՀ շրջանակը կապահովի ինտեգրված ֆինանսական հարթակ՝ ավելի մեծացնելու մասնավոր ոլորտի կողմից կլիմային առնչվող ծրագրերին (գենդերային բաղադրիչի կիրառմամբ) տրամադրվող ֆինանսավորումը: Ավելին, Շրջանակը բարենպաստ միջավայր կստեղծի՝ խրախուսելով տեղական ԳՖՀ-ների կողմից առաջադեմ կլիմայական պրակտիկաների զարգացումը, ներառյալ անցումային նախագծերի ներդրում, որը կհանգեցնի համակարգային անցմանը դեպի կլիմայի հետ համատեղելի ֆինանսական համակարգ:

## Ազդեցությունն անցումային գործընթացի վրա

Անցումային գործընթացի վրա ակնկալվող ազդեցության (ETI) ցուցանիշ՝ 65-85: ԿԿՀ ԿՖՀ-ն կնպաստի Կանաչ տնտեսությանն անցման որակին՝ ֆինանսավորումն ուղղելով կանաչ տեխնոլոգիաներին ու ծառայություններին և խթանելով տեղական ֆինանսական համակարգերի փոխակերպումը կլիմայի անցման պլանավորման միջոցով: Ֆինանսավորման 100%-ը կուղղվի Կանաչ տնտեսության անցման պահանջներին համապատասխանող գործողություններին:

## Հաճախորդի վերաբերյալ տեղեկատվություն

Վարկառուներ կհանդիսանան ԳՖՀ-ները, այդ թվում՝ առևտրային բանկերը, միկրոֆինանսական հաստատությունները և լիզինգային ընկերությունները:

## ՎՁԵԲ-ի կողմից տրամադրվող ֆինանսավորում

434,000,000.00 ԱՄՆ դոլար

## Ծրագրի ընդհանուր արժեքը

620,000,000.00 ԱՄՆ դոլար

## Հավելյալություն

Տրամադրվում է համապարփակ փաթեթ, որն իր մեջ ներառում է (i) շուկայում առաջարկվող միջինից ավելի երկար **Ժամկետով** ֆինանսավորում, (ii) տեխնիկական համագործակցություն և քաղաքական երկխոսություն՝ ուղղված ԳՖՀ-ների կանաչ վարկավորման կարողությունների հզորացմանը, (iii) խրախուսական դրամաշնորհներ իրավասու ԳՖՀ-ներին՝ խրախուսելու անցումային ծրագրերի մշակումը, և (iv) գենդերային բաղադրիչի կարևորում կանաչ տնտեսության մեջ գենդերային բացերը հասցեագրելու միջոցով:

Ընդհանուր առմամբ, փաթեթը նպատակաուղղված է կլիմային առնչվող ներդրումների ֆինանսավորման ծավալի զգալի ավելացմանը՝ միաժամանակ բարձրացնելով ֆինանսական հատվածի հարմարվողականությունը կլիմայական ռիսկերին՝ հաշվի առնելով գենդերային ասպեկտները:

## Բնապահպանական և սոցիալական ազդեցության ամփոփ նկարագիր

Շրջանակը դասակարգված չէ, սակայն ենթածրագրերը կդասվեն ՖՀ կատեգորիայի՝ համաձայն ՎՁԵԲ Բնապահպանական և սոցիալական քաղաքականության (ԲՍԲ), 2019թ. և կանցնեն սոցիալական և բնապահպանական համապարփակ ուսումնասիրություն: Նոր ԳՖՀ-ները պետք է լրացնեն ՎՁԵԲ բնապահպանական և սոցիալական համապարփակ ուսումնասիրության հարցաշարը, իսկ արդեն առկա ԳՖՀ-ների նախորդ տարեկան հաշվետվությունները կվերանայվեն առկա բացերը հասցեագրելու նպատակով: ԳՖՀ-ները պետք է պահպանեն կամ բարելավեն իրենց բնապահպանական և սոցիալական կառավարման համակարգերը՝ գնահատելու և կառավարելու բնապահպանական և սոցիալական ռիսկերը, այդ թվում՝ սեռական շահագործման, բռնության և ոտնձգության (ՍՇԲՈ) ռիսկերը, որոնք այս շրջանակի համար երկրի համատեքստում գնահատվել են որպես ցածրից միջին: ԳՖՀ-ները պետք է համապատասխանեն ՎՁԵԲ-ի Գործունեության 2-րդ, 4-րդ և 9-րդ պահանջներին, հետևեն բացառման ցանկերին և ՎՁԵԲ-ին ներկայացնեն բնապահպանական և սոցիալական տարեկան հաշվետվություններ: Շահառուները պետք է համապատասխանեն ազգային օրենքներին և վերականգնվող էներգիայի ծրագրերի ՎՁԵԲ համապատասխանության չափանիշներին:

Արևային ֆոտովոլտային (ՖՎ) ծրագրերից պահանջվում է համապատասխանություն արևային էներգիայի ենթածրագրերի/ ենթաներդրումների ՎՁԵԲ-ի բնապահպանական և սոցիալական համապատասխանության չափանիշներին և պահանջվող ուղեցույցներին, որոնք հասանելի են ՎՁԵԲ կայքում:

## Տեխնիկական համագործակցություն և դրամաշնորհային ֆինանսավորում

Շրջանակը կհամալրվի համապարփակ տեխնիկական համագործակցության («ՏՀ») ծրագրով և ընտրված երկրներում տարբեր քաղաքական երկխոսություններով (ԿԿՀ և այլ դոնորների կողմից ֆինանսավորմամբ)՝ նպատակ ունենալով (i) տեղական ֆինանսական համակարգերի կանաչ վարկավորման կարողությունների հզորացում գեներային բաղադրիչի ներառմամբ և (ii) բարենպաստ միջավայրի ստեղծում՝ խրախուսելով տեղական ԳՖՀ-ների կողմից առաջադեմ կլիմայական պրակտիկաների զարգացումը, ներառյալ անցումային նախագծերի ներդրում, որը կհանգեցնի համակարգային անցմանը դեպի կլիմայի հետ համատեղելի ֆինանսական համակարգ: Բացի այդ, ԳՖՀ-ները կկարողանան օգտվել ֆինանսական խրախուսման դրամաշնորհներից՝ խթանելու կլիմայի անցումային նախագծերի իրականացումը (ԿԿՀ ֆինանսավորմամբ):

## Ծրագրի ամփոփ փաստաթղթի վերջին թարմացումը

8-ը հունվարի 2025թ.

## Անցումային շրջանի ընկալումը

[Այստեղ](#) կարող եք լրացուցիչ տեղեկություններ գտնել առ այն, թե ինչ մոտեցումներ է կիրառում ՎՉԵԲ-ը անցումային շրջանում առաջընթացի վրա ազդեցությունը չափելու համար:

## Բիզնես հնարավորություններ

Բիզնես հնարավորությունների կամ գնումների համար դիմե՛ք հաճախորդի ընկերությանը:

ՎՉԵԲ-ի հետ կապված (գնումներին չառնչվող) բիզնես հնարավորությունների համար դիմե՛ք.

Էլ. փոստ՝ [projectenquiries@ebrd.com](mailto:projectenquiries@ebrd.com)

Պետական ոլորտի ծրագրերի համար այցելեք [ՎՉԵԲ գնումներ](#):

Հեռ: +44 20 7338 6794

Էլ. փոստ: [procurement@ebrd.com](mailto:procurement@ebrd.com)

## Ընդհանուր հարցումներ

Կարող եք անել կոնկրետ հարցումներ՝ օգտագործելով [ՎՉԵԲ հարցումների ձևաթուղթը](#):

## Բնապահպանական և սոցիալական քաղաքականություն (ԲՍՔ)

[ԲՍՔ-ն](#) և դրա հետ կապված՝ Գործունեության նկատմամբ պահանջները (ԳՊ-ներ) սահմանում են այն ուղիները, որոնց միջոցով ՎՉԵԲ-ն իրականացնում է իր հանձնառությունը՝ խթանել «Էկոլոգիապես առողջ և կայուն զարգացումը»: ԲՍՔ-ն և ԳՊ-ները պարունակում են հատուկ դրույթներ, ըստ որոնց հաճախորդները պետք է համապատասխանեն տեղեկությունների հրապարակայնացման և խորհրդատվության մասին ազգային օրենքների կիրառվող պահանջներին, ինչպես նաև ստեղծեն բողոքարկման մեխանիզմ՝ շահագրգիռ կողմերի մտահոգությունները և բողոքները ստանալու և լուծումները հեշտացնելու նպատակով, մասնավորապես, հաճախորդի և ծրագրի կողմից բնապահպանական և սոցիալական ասպեկտների կատարողականի վերաբերյալ: Կախված ծրագրի բնապահպանական և սոցիալական ռիսկերի և ազդեցությունների բնույթից և մասշտաբից, ՎՉԵԲ-ը լրացուցիչ պահանջում է, որ իր հաճախորդները պատշաճ կերպով տեղեկություն հրապարակեն ծրագրից բխող ռիսկերի և ազդեցությունների մասին կամ բովանդակալից խորհրդակցություններ անցկացնեն շահագրգիռ կողմերի հետ, դիտարկեն նրանց կարծիքներն ու արձագանքեն դրանց:

Այս կապակցությամբ ՎՉԵԲ-ի գործելակերպի վերաբերյալ առավել մանրամասն տեղեկությունները ներկայացված են [ԲՍՔ](#)-ում:

## Բարեվարքություն և համապատասխանություն

ՎՉԵԲ-ի՝ Համապատասխանության վերահսկման գլխավոր տնօրենի գրասենյակը (ՀՎԳՏԳ) խթանում է լավ կառավարումը և ապահովում բարեվարքության բարձրագույն չափանիշների կիրառումը Բանկի գործունեության բոլոր ասպեկտներում՝ միջազգային լավագույն փորձի համաձայն: Բանկի բոլոր հաճախորդների վերաբերյալ իրականացվում է բարեվարքության պահանջներին համապատասխանության ստուգում-ուսումնասիրություն՝ համոզվելու, որ ծրագրերը չեն պարունակում Բանկի համար անընդունելի ռիսկեր բարեվարքության կամ հեղինակության առումով: Բանկի համոզմամբ ծրագրի գնահատման և հաստատման փուլերում խնդիրների հայտնաբերումն ու լուծումը Բանկի գործարքների բարեվարքության ապահովման ամենաարդյունավետ միջոցներն են: ՀՎԳՏԳ-ն առանցքային դեր է կատարում պաշտպանիչ այս գործողություններում, ինչպես նաև օգնում է վերահսկել բարեվարքությանն առնչվող ռիսկերը ծրագրերի հետներդրումային փուլերում:

ՀՎԳՏԳ-ն նաև պատասխանատու է ՎՉԵԲ-ի կողմից ֆինանսավորվող ծրագրերում կեղծիքի, կոռուպցիայի և չարաշահման կապակցությամբ մեղադրանքների հետաքննության համար: Ցանկացած անձ, ինչպես Բանկի ներսում, այնպես էլ դրանից դուրս, ով կասկածներ ունի, որ առկա են կեղծիքի կամ կոռուպցիայի դեպքեր, պետք է գրավոր զեկույց ներկայացնի Համապատասխանության վերահսկման գլխավոր տնօրենին [compliance@ebrd.com](mailto:compliance@ebrd.com): Խնդիրների մասին բոլոր զեկույցները կքննվեն ՀՎԳՏԳ-ի կողմից՝ հետագա քայլերը որոշելու նպատակով: Քննվելու են բոլոր զեկույցները, այդ թվում՝ անանուն զեկույցները: Չեկույցները կարող են ներկայացվել Բանկի կամ Բանկի գործունեության ցանկացած երկրի լեզվով: Տեղեկություններ տրամադրելիս անհրաժեշտ է դրսևորել բարեխիղճ մոտեցում:

## Տեղեկությունների հասանելիության քաղաքականություն (ՏՀՔ)

ՏՀՔ-ն սահմանում է, թե ինչպես է ՎՉԵԲ-ը հրապարակայնացնում տեղեկությունները և խորհրդակցում շահագրգիռ կողմերի հետ, որպեսզի 2020թ. հունվարի 1-ին ուժի մեջ մտնելուց հետո նպաստի ՏՀՔ-ի ռազմավարությունների, քաղաքականությունների և գործառնությունների մասին ավելի լավ իրազեկմանն ու ընկալմանը: Խնդրում ենք այցելել [Տեղեկությունների հասանելիության քաղաքականության](#) կայքէջ՝ պարզելու, թե ինչ տեղեկություն կա ՎՉԵԲ կայքում:

Տեղեկություններ ստանալու համար կարող եք կոնկրետ հարցումներ ներկայացնել՝ օգտագործելով [ՎՉԵԲ-ի հարցումների ձևաթուղթ](#):

## Ծրագրերի հաշվետվողականության անկախ մեխանիզմ (ԾՀԱՄ)

Եթե Հաճախորդի կամ Բանկի հետ բնապահպանական և սոցիալական ասպեկտների կամ հրապարակայնացման հետ կապված խնդիրների լուծմանն ուղղված ջանքերն (օրինակ, Հաճախորդի՝ Ծրագրի մակարդակով բողոքարկման մեխանիզմի կամ Բանկի ղեկավարության հետ անմիջական ներգրավման միջոցով) ապարդյուն են, ապա անհատներն և կազմակերպությունները կարող են

դիմել ՎՉԵԲ-ի՝ Ծրագրերի հաշվետվողականության անկախ մեխանիզմին (ԾՅԱՄ)՝ իրենց մտահոգող խնդիրների լուծումը ստանալու համար:

ԾՅԱՄ-ն անկախ եղանակով քննում է Ծրագրի հետ կապված խնդիրները, որոնք, ենթադրաբար, վնաս են պատճառել (կամ, հավանաբար, կարող են վնաս պատճառել): Մեխանիզմի նպատակն է աջակցել Ծրագրի շահագրգիռ կողմերի միջև երկխոսությանը՝ բնապահպանական, սոցիալական ասպեկտների և հրապարակայնացման հետ կապված խնդիրները լուծելու նպատակով, և պարզել, արդյոք Բանկը համապատասխանել է իր իսկ [Բնապահպանական և սոցիալական քաղաքականությանը](#) կամ իր՝ [Տեղեկությունների հասանելիության քաղաքականությանը](#)՝ Ծրագրին վերաբերող կոնկրետ դրույթներին, և, անհրաժեշտության դեպքում, վերացնել այդ քաղաքականություններին վերաբերող ցանկացած անհամապատասխանություն՝ միաժամանակ կանխելով Բանկի կողմից անհամապատասխանության դեպքերն ապագայում:

ԾՅԱՄ-ին և իր մանդատի վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների համար խնդրում ենք այցելել [Ծրագրերի հաշվետվողականության անկախ մեխանիզմի կայքէջը](#): Տեղեկացեք, թե ինչպես պետք է [հայտ ներկայացնել](#) վերանայման համար, կամ կապ հաստատեք ԽՅԱՄ-ի հետ [ipam@ebrd.com](mailto:ipam@ebrd.com) էլ փոստի միջոցով ուղղորդման համար: